ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 160 – Ա **14 մայիսի 2019 թ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19 - Ի N 43 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 19-ի «Ոլորտային մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N 43–Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ոլորտային մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբ ըստ ոլորտների՝

Մուշեղյան Յուրա	- մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ ֆինանսական
Զոհրաբյան Արմեն	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ՝ քաղաքաշինություն
Համբարձումյան Համբարձում	- մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ գյուղատնտեսություն և բնապահպանություն
Զազյան Կարեն	- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ կրթություն, մշակույթ և սպորտ
Վարդանյան Լուսինե	- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար՝ առողջապահություն և սոցիալական ապահովություն
Հարությունյան Վանիկ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի

	տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ՝ տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում
Մնացականյան Վարդուհի	- մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ՝ բոլոր ոլորտների ամփոփում և վերլուծություն
Շահբազյան Հասմիկ	- մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ՝ քաղաքացիական հասարակություն
Ղուրշուդյան Մարատ	- մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ՝ հողաշինարարություն
Խաչատրյան Գևորգ	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ՝ ճանապարհաշինություն
Բիձյան Հակոբջան	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ՝ ջրամատակարարում, ջրահեռացում և գազամատակարարում».

2) կարգադրության 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանին:»:

14.05.2019

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ